Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 7

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Մ. Դատումյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Բ. Հարությունյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բաղալյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Վ. Սաֆարյանը և Ա. Ներսիսյանը, օգնական Ն. Գևորգյանը, քաղաքացիներ Ա. Անթանյանը, Է. Մելիքյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

   /Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Արմեն Հովհաննեսի Անթանյանին <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկի տնօրեն նշանակելու մասին:

   /Զեկուցող՝ Ս. Սահակյան/

4. Էդգար Գագիկի Մելիքյանին <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի տնօրեն նշանակելու մասին:

   /Զեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու և ուղղակի վաճառքով օտարելու մասին:

   /Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

6. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

7. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

9. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

10. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց փոփոխություններ և լրացումներ կատարել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. թիվ 6-Ա որոշման մեջ՝ նոր խմբագրությամբ ընդունելով 1-17-րդ հավելվածները: Շ. Վահանյանը նշեց, որ առաջարկվող փոփոխությամբ հստակեցվում է աշխատողների թվաքանակը՝ դրանք համապատասխանեցնելով սահմանված հաստիքային միավորներին:

Զեկուցողը միաժամանակ հայտնեց, որ անհրաժեշտությունից ելնելով վերանայվել են նաև նախկինում գոյություն ունեցած որոշ հաստիքներ՝ մասնավորապես 0.5 դրույք հաստիքային միավորով նախադպրոցական յուրաքանչյուր հաստատության հաստիքացուցակում սահմանվել է դերձակ:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և Շանթ Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ, 1 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *Արմեն Հովհաննեսի Անթանյանին <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկի տնօրեն նշանակելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Արմեն Հովհաննեսի Անթանյանին <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկի տնօրեն նշանակելուն:

Զեկուցողը, մասնավորապես նշեց, որ ավագանու նախորդ նիստի ժամանակ հաստատվել են համայնքային հիմնարկի կանոնադրությունը և հաստիքացուցակը և այս որոշմամբ ըստ էության սկսվում է հիմնարկի կազմավորման գործընթացը:

Հարցի շուրջ իր կարծիքը հայտնեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - *Էդգար Գագիկի Մելիքյանին <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի տնօրեն նշանակելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Էդգար Գագիկի Մելիքյանին <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի տնօրեն նշանակելուն:

Զեկուցողը, մասնավորապես նշեց, որ ինչպես նախորդ դեպքում, այնպես էլ այս հիմնարկի դեպքում ավագանու նախորդ նիստի ժամանակ հաստատվել են համայնքային

հիմնարկի կանոնադրությունը և հաստիքացուցակը և ըստ էության՝ այս որոշմամբ սկսվում է հիմնարկի կազմավորման գործընթացը:

Հարցի շուրջ իր կարծիքը հայտնեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - *Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու և ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող 0181-0023 ծածկագրով 0.172հա հողամասի գործառնական նշանակությունը որպես բնակավայրերի նշանակության, հասարակական կառուցապատման փոխելու և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու առաջարկությանը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:
Թ. Շահվերդյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - *Հողամասերի փոխանակություն կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի <<Վառոյի ձորակ>> թաղամասում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0002-0039/, Երջանիկ Մաթևոսի Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող 693քմ տնամերձ հողամասը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող, 02-001-0022-0006 ծածկագրով, <<Վառոյի ձորակ>>, 3-րդ թաղամաս, N 118/1 հասցեում գտնվող 600քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի հետ:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ, 1 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումները, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող մի շարք հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալուն:

Հ. Բաղդասարյանը նշեց, որ սույն որոշման նախագիծը կազմված է երկու հավելվածներից՝ 1-ին հավելվածում նշված են բնակավայրերի նշանակության հողամասերը, իսկ երկրորդում՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքները:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների՝ գյուղ. նշանակության հողամասերում գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7 հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի պահանջներով, համաձայնություն տալ գյուղատնտեսական արտադրական նշանակության փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2022 թվականի մարտի 11-ը, ժամը՝ 17:00-ին:

Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր.7:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի փետրվարի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____

ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____

ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____

ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ _____

ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ _____

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ _____

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ